

# Ժողովուրդ

20 հունվարի շաբաթ 2024  
տպագրության ԺԳ տարի

4  
(2854)

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՈՒՇԱԳՐԱՎ ԶՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ՝ ԱՄԻՆՅԱՆԻ ՏԱՆ ՎՐԱ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ



«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանը իրավապահներին հայտնել է, որ որեւէ մեկին չի կասկածում իր տան կրակոցների գործով եւ չի կարողանում հասկանալ, թե ով կարող էր նման բան անել:

ՀՀ քննչական կոմիտեն, Թաթուլ Ասիլյանից բացի, հարցաքննել է նաեւ Նրա կնոջը: Եվ, ահա, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Ասիլյանի կինը հայտնել է իրավապահներին, որ կասկածում է, թե Հարություն Հարությունյանն է իր տան վրա կրակել:

Ահա, Ասիլյանի կնոջ ցուցմունքի հիման վրա էլ, Հարություն Հարությունյանին կալա-նավորել են: Սակայն Հարություն Հարությունյանը պնդում է, որ կատարվածի հետ կապ չունի:

Հիշեցնենք՝ հունվարի 14-ին կրակոցներն էին արձակվել ՔՊ-ից հեռացված Թաթուլ Ասիլյանի տան վրա: Իրավապահների գործողությունների արդյունքում երեկ կալանա-վորվեց Հարություն Հարությունյանը, որը առավել հայտնի է Ռեջանցի Հարութ անունով: Ըստ լուրերի՝ նա Ասիլյանի քրոջ ընկերն է:

Ի դեպ, ArmLur.am-ը գրել էր, որ ուշագրավ իրադարձություններ են կատարվում այս քրեական գործով: Բանն այն է, որ դատարանի որոշմամբ՝ հունվարի 17-ին կալանքի պետք է տանեին Հարություն Հարությունյանին: Արդյունքում՝ իրավապահները Հարու-թյուն Հարությունյանին «Նուբարաշեն» ՔՀՀ են տանում այն ժամանակ, երբ կալանքի ժամկետը անցած է լինում, եւ քրեակատարողական հիմնարկը, կալանքի ժամկետը անցնելու հիմքով, հրաժարվում է Հարությունյանին կալանավորել: ArmLur.am-ին հա-սած տեղեկությունների համաձայն՝ իրավապահներն Ասիլյանի տան վրա կրակոցների գործով անցնող Հարություն Հարությունյանին տանում են ոստիկանության Նաիրիի բա-ժին: Մեր տեղեկություններով՝ Հարություն Հարությունյանի հարազատներն ասում են, որ Նրան ապօրինի կերպով են պահում անազատության մեջ: Վերջիններս պնդում են, որ Հարությունյանին ազատ արձակեն, եւ որ իրենք չեն խուսափի կրկին ներկայանալ իրավապահներին. սակայն, կալանքի ժամկետն անցել է, եւ Հարություն Հարությունյա-նին դեռեւս ապօրինի կերպով պահում են անազատության մեջ մինչեւ կալանքի նոր որոշում կբերեն:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. Նիկոլ Փաշինյանի՝ Արմավիրի մարզ այցից հետո պաշտոնական արված մարզպետին՝ Էդուարդ Հովհաննիսյա-նին, փոխարինեց Արմավիր համայնքի ղեկավար Դավիթ Խուրաթյանը: Ներկայացնենք, թե ինչ ունեցվածքով Արմավիրի համայնքապետը դարձավ Արմավիրի մարզի մարզպետ: Հետաքրքիրն այն է, որ Նախկին համայնքապետը Արմավիրի մարզում որեւէ անշարժ գույք կամ բնակարան չի հայտարարագրել: Դավիթ Խուրաթյանը 2018 թվականի հոկտեմբերի 27-ին է ստանձնել համայնքապետի պաշտոնը, դրանից հետո՝ 2019 թվականի դեկտեմբերին, ձեռք է բերել համատեղ սեփականությամբ բնակարան Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Բնակարանը, ըստ հայտարարագրի, հիփոթեքով է ձեռք բերված, որն արժեքել է 19 մլն 485 հազար դրամ: Հենց այս պատճառով էլ Խուրաթյանը ՀՀ ֆինանսների նախա-րարից ստացել է 1 մլն 521 հազար դրամ, որն էլ հիփոթեքի մայր գումարը մարելու համար եկամտահարկի վերադարձ է: Խուրաթյանը տրանսպորտա-յին որեւէ միջոց չի հայտարարագրել: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 510 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 3 մլն 800 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտը կազմել է 8 մլն 661 հազար դրամ, որից 7 մլն 140 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է եղել ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետի աշխատակազմից:



Արցախի գործադիր մարմնում քաղաքական խմորումները շարունակվում են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի որոշմամբ օրեր առաջ ԱՀ Նոր պետնախարար է նշանակվել քաղաքաշինության նախկին նախարար Արամ Սարգսյա-նը: Մինչ այս ԱՀ պետնախարարի պաշտոնը զբաղեցնում էր Ադրբեջանի կողմից ապօրինի կալանքի տակ պահվող, Արցախի նախկին նախագահ Արա-յիկ Հարությունյանի հորեղբոր որդին՝ Արթուր Հարությունյանը: Ինչպես Արցախի մեր աղբյուրներն են հայտնում՝ Արթուր Հարությունյանն իր ցանկությամբ է ազատման դիմում գրել: Վերջինս այդ պաշտոնին նշանակվել էր նախորդ տարի՝ սեպտեմբերին:



Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանի պաշտոնակազմում հետո Նիկոլ Փաշինյանը երկար ժամանակ մարզպետի թեկնածուի փնտրտուքի մեջ է եղել: Եվ մինչ թեկնածուին գտնելը՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը երկար փնտրտուքների մեջ էր: Նույնիսկ խմբակցության պատգամա-վոր, ՔՊԿ վարչության անդամ Արմի Դավոյանին էին առաջարկել, սակայն նա մերժել էր՝ ասելով, որ օրենսդիրում իրեն լավ է զգում, ինչից հետո որեւէ պնդում չէր եղել, թե անհրաժեշտ է թիմի որոշումը կատարել: Բանն այն է, որ Լոռին բարդ մարզ է, եւ կին մարզպետը քրեական ավանդույթներով հա-րուստ տարածաշրջանում ուղղակի չէր ընկալվի: Առավել եւս՝ Նրան մարզում չեն ընդունում մեծ հաշիվով: Դրա համար Արմի Դավոյանի թեման միան-գամից փակվել է:

















Էջը՝ ՄԱՌԻԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեղի հետ է ամուսնալուծությունը կասարվում դասական կարգով: Հայկ Գաբրիելյան (41 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

- ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,
բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում հրականացնող մարմիններում կատարելուց,
գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

ՀՀ փաստաթղթերի պալատ

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսինների հաշտեցնելու համար...

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն մասնակի կենսաթոշակի իրավունք: Արփինե Ստեփանյան (58 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնակի կենսաթոշակ նշանակվում է՝

- 1) կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին, եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,
2) թատերական եւ թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին, եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

ՀՀ սոցիալական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». 1-ին եւ 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (ունեցել են առնվազն 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ), եւ լրացել է նրանց՝ սույն հոդվածով սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Միլանի սիմֆոնիկ նվագախմբի նոր երաժշտական ղեկավարը կլինի վիեննացի հայկական ծագումով Էմանուել Ծգևավորյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Զեղ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ \_\_\_\_\_
Ազգանուն՝ \_\_\_\_\_
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




Table with weather forecasts for various regions like Yerevan, Gyumri, Vanadzor, etc.

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 19.1.2024

Գլխավոր խմբագիր՝ ԶԱՐ ԿԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: